ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ծածկագիր՝ ՏԿԵՆ-ՆԸ-2022/1Ն-4

ք.Երևան «31» 10 2025թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և նախաորակավորված մասնակից (այսուհետ՝ Մասնակից) «ՄԱԼԿ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սուքիասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն նախնական պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագիրը կնքվում է մարդկային զոհերի, մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդու կենսագործունեության բնականոն պայմանների խախտման հանգեցնող կամ նման իրավիճակներ առաջանալու վտանգի դեպքում հրատապ համարվող կարիքների բավարարման շրջանակում ճանապարհների և/կամ տրանսպորտային օբյեկտների կառուցման կամ վերակառուցման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման ծառայության (այսուհետ՝ ծառայություն) գնման նպատակով:

1.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է անժամկետ՝ մինչև Մասնակցի կողմից պայմանագիրը դադարեցնելու մասին դիմումը Պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելու կամ էլեկտրոնային եղանակով ծանուցվելու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն պարտավոր է՝

2.1.1 Հրավերով հայտի ներկայացման ծանուցում ուղարկել նախաորակավորված բոլոր մասնակիցներին:

2.1.1 Որոշել ընտրված մասնակցին՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած նախաորակավորված մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

2.2 Մասնակիցն իրավունք ունի՝

2.2.1 Հրավերով հայտի ներկայացման ծանուցում ստանալուց հետո հայտ չներկայացնել:

2.2.2 Հրավերի հիման վրա ներկայացնել գնային առաջարկը ընդհանուր գնով:

2.2.3 Դադարեցնել պայմանագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով պատվիրատուին: Պայմանագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում դրա հիման վրա տվյալ մասնակցի հետ նախկինում կնքված պայմանագրերը: Պայմանագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգ մուտքագրվելու կամ էլեկտրոնային եղանակով ծանուցվելու օրվան հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում Պատվիրատուն տվյալ մասնակցի հետ կնքված պայմանագիրը հեռացնում է տեղեկագրից:

2.3 Մասնակիցը պարտավոր է՝

2.3.1 Ընտրված մասնակից ճանաչվելուց հետո ներկայացնել պայմանագրի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է պայմանագրի գնի քսան տոկոսին: Տոկոսային արտահայտությամբ գնային առաջարկների ներկայացման դեպքում, պայմանագրի ապահովման չափը հաշվարկվում է հրավերով սահմանված՝ շինարարական աշխատանքների կատարման խոշորացված արժեքի նկատմամբ:

2.3.2 Հրավերի հիման վրա հայտ ներկայացնելու դեպքում վերահաստատել նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված որակավորման պահանջին իր համապատասխանությունը: Մասնակցի որակավորման պահանջին իր համապատասխանությունը համարվում է վերահաստատված, եթե նա հայտով ներկայացնում է դրա մասին գրավոր հայտարարություն:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Հրավերի հիման վրա հայտ ներկայացնելու պահանջի դեպքում այն ներկայացվում է ծանուցվելու օրվան հաջորդող երեք աշխատանքնային օրվա ընթացքում՝ վերահաստատելով նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված որակավորման պահանջին իր համապատասխանությունը:

3.2 Նախաորակավորված մասնակիցների նկատմամբ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով (մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ) նախատեսված որակավորման չափանիշները, դրանց գնահատման պայմանները, կնքվող պայմանագրերի ֆինանսավորման, կատարման և կառավարման պայմանները սահմանվում են օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվող որոշմամբ և կներառվեն ծանուցվող հրավերում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՄԱՍՆԱԿԻՑ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք. Երևան,Կառավարական տուն 3, ՀՀ ՖՆ գործառնական վարչություն ՀՎՀՀ 02815457 Գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյան ----------	«ՄԱԼԿ» ՍՊԸ ք. Գյումրի Տիգրան Մեծի 1 «Արարատբանկ» ԲԲԸ Գյումրու մ/ճ ՀՀ՝ 1510052795500100 ՀՎՀՀ՝ 05549897 Տնօրեն՝Ա.Սուքիասյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.